

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏԳԱԴԻՏԱՐԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՆԵՐ
СООБЩЕНИЯ БЮРАКАНСКОЙ ОБСЕРВАТОРИИ

ՊՐԱԿ III

Պատասխանատու խմբագիր Վ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ
Ответственный редактор В. АМБАРЦУМЯН

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

ժամանակակից աստղային աստղադիտություն հիմնական պրոբլեմներից մեկը հանդիսանում է միջաստղային տարածությունում լույսի կլանման ուսումնասիրությունը, որն առանձնապես խոշոր նշանակություն ունի Գալակտիկայի կառուցվածքի, նրա չափերի, ինչպես նաև աստղային սիստեմների ֆիզիկական բնույթի հետազոտման տեսակետից:

Մինչև 1930 թիվը կլանումն ապացուցված էր համարվում միայն Գալակտիկայի մութ միդամածությունների դեպքում: Սակայն 1930 թվին Տրումպլերը¹ և Վան-դեն-Համպը² ցույց տվին, որ աստղերից եկող լույսը ոչ միայն միդամածությունների կողմից է կլանվում, այլև Գալակտիկայի ամբողջ միջաստղային տարածությունը հանդիսանում է կլանող և ոչ թե թափանցիկ միջավայր, ինչպես ենթադրում էին անցյալում: Բացի այդ, հետազոտությունները ցույց են տվել, որ լույսի կլանումն ընդհանրապես ընտրական (սելեկտիվ) բնույթ ունի: Կլանումների վերաբերյալ մինչև այժմ կատարած հետազոտություններից պարզվել է, որ աստղերից եկող լույսի կլանման չափը կախված է նրանց հեռավորությունից և կլանող շերտի խտությունից:

Լույսի կլանման և կլանող նյութի հարցի հետազոտության տեսակետից նշանակալից աշխատանք է կատարել Վ. Հ. Համրարձումյանը^{3,4}: Նա հանդամանորեն հիմնավորել է, որ Գալակտիկայի համակարգությունում ընդհանուր կլանում կատարող նյութը բաղկացած է բաղմաթիվ առանձին կլանող ամպերից, որոնցից յուրաքանչյուրը միջին թվով կլանում է 0.2-ից մինչև 0.3 աստղային մեծություն:

Հայտնի է, որ երկարապարբերական ցեֆեիդների օգնությամբ լույսի կլանման գործակիցը տարբեր ևղանակներով որոշելիս ստացվել են տարբեր արդյունքներ: Այսպես օրինակ՝ Ջոյը⁵ ցեֆեիդների տեսադժային արագությունների միջոցով Գալակտիկայի պտտումը հետազոտելիս՝ կլանման գործակիցը մեկ կի-

լուսարսեկ հեռավորության համար ընդունել է հավասար $0^m.85$, Բոտլինգերը և Շնեյլերը⁶ շ—կոորդինատի եղանակով օդաչոր-ծելով 171 երկարապարբերական ցեֆեիդի տվյալները, կլանման դործակիցը ստացել են հավասար $2^m.0$ ։ Մեկնիկովը⁷, օդաչոր-ծելով հիմնականում Ջոյի ընտրած ցեֆեիդները, բայց նրանց էլեմենտները ճշտված, նույնպես ըստ շ—կոորդինատի, որոշել է կլանման դործակիցը հավասար $1^m.0$ ։

Հիմնվելով բազմաթիվ հետադոտությունների վրա, վստահորեն կարելի է ասել, որ փոփոխական աստղերը և դրանցից առանձնապես երկարապարբերական ցեֆեիդները շնորհիվ նրանց վերաբերյալ հայտնաբերված օրինաչափությունների, հանդիսանում են ամենահարմար երկնային մարմինները, որոնց հիման վրա կարելի է ուսումնասիրել Գալակտիկայի կառուցվածքը և ընդհանրապես ընդարձակել մեր ճանաչողությունը տիեզերքի կառուցվածքի մասին։ Այդ օրինաչափությունները վերաբերում են ցեֆեիդների պարբերաշրջանի, ապելտրալ տիպերի, բացարձակ աստղային մեծության, զույնի ցուցիչի, ջերմաստիճանի և այլի միջև գոյություն ունեցող համապատասխան առնչություններին, ցեֆեիդների հիմնական օրինաչափություններից է պարբերաշրջան-բացարձակ պայծառություն՝ առնչությունը, որն առաջին անգամ հայտնաբերվել է 1908 թվին, Մադելլանի փոքր Ամպում ուսումնասիրված ցեֆեիդների միջոցով⁸։

Այնուհետև այդ հարցով զբաղվել են Հերյշպրունգը⁹, և Շապլին¹⁰, որոնք հիմնավորել են պարբերաշրջան-բացարձակ աստղային մեծություն՝ կապակցությունը, Հետագայում, Շապլին ավելի հարուստ դիտողական տվյալների հիման վրա ճշգրտել է այդ կապակցությունը։ Վերջին տարիներում այդ հարցով շատ ավելի հանգամանորեն զբաղվել է Բ. Վ. Կուկարկինը^{11,12}, Նա 1937 թվին 348 և 1946 թ. 776 երկարապարբերական ցեֆեիդների տվյալների հիման վրա ստացել է պարբերաշրջանի և բացարձակ պայծառության կապը։ Վերջին դեպքում նրան հաջողվել է ստանալ համեմատաբար ավելի ճշգրիտ կապակցություն պարբերաշրջանի և բացարձակ պայծառության միջև։

Մեր դիտած ցեֆեիդների բացարձակ աստղային մեծությունները մենք հաշվել ենք Բ. Վ. Կուկարկինի ստացած բանաձևով, որի ճշտությունն, ինչպես ասացինք, անհամեմատ ավելի մեծ է, որովհետև այն ստացված է ավելի հարուստ դիտողական տվյալների հիման վրա¹³,

Լույսի կլանման հարցի վերաբերյալ կարևոր աշխատանք է կատարել նաև Պ. Պ. Պարենազսն^{13,14}։ Նա, օգտագործելով հա-
րուստ դիտողական նյութեր, B և ալ տիպի աստղերի գույնի ցու-
ցիչների վերաբերյալ որոշել է լույսի կլանումը տարբեր ուղղու-
թյունների համար և տվել է մատչելի բանաձև, որով կարելի է
որոշել լույսի կլանումը որպես հեռավորության ու Գալակտիկ
լայնության ֆունկցիա։

Ստերրինսի, Հուֆֆերի և Վիթֆորդի^{15,16} ղիտուեմներից պարզ-
վել է, որ առավել կարճրած աստղերը խտացած են Գալակտի-
կայի հստարակածում, և մասնավորապես Գալակտիկայի կենտրոնի
մոտ, իսկ հակակենտրոնի մոտ կարճրումը թույլ է, կարճրած
աստղերի տեսանելի բաշխումից երևում է, որ կլանումը Գա-
լակտիկայում այնքան անկանոն ու անհամասեռ է, որ տարա-
ծությունն որեւէ մեծ տիրույթի համար չի կարելի կիրառել կլան-
ման հաստատուն գործակից։

Այսպիսով պետք է նշել, որ ինչպես երկարապարբերական
ցիֆերիզների, այնպես էլ B աստղերի և ալ օրեկտների վերաբեր-
յալ բաղմակողմանի ուսումնասիրությունները, կապված միջ-
աստղային տարածության մեջ լույսի կլանման պրոբլեմի հետ,
հնարավորություն կտան ավելի լայնորեն պարզաբանելու ու
զարգացնելու Գալակտիկայի կառուցվածքի հետազոտման հետ
կապված կարևորագույն հարցերը։

Այս բոլորից ելնելով, մեր նպատակն է եղել Գալակտիկա-
կան ցիֆերիզների լուսանկարչական ղիտուեմների միջոցով որոշել
նրանց լուսանկարչական ու լուսատեսողական աստղային մե-
ծությունները, գույնի ցուցիչները, որտեղից նաև որոշել նրանց
գույնի ավելցուկները—ընտրական կլանումները, լույսի ընդհա-
նուր կլանումները և իրական հեռավորությունները։

Այս աշխատության առաջին գլխում նկարագրված է ղի-
տուեմների մշակման մեթոդը, որոշված է յուրաքանչյուր ղիտ-
ման համապատասխան գենիթային հեռավորության հետ կապ-
ված ուղղումը, աստղային մեծությունները բերված են միատե-
սակ ֆազի և որոշված են գույնի ցուցիչները։

Երկրորդ գլխում նկարագրված է ցիֆերիզների նորմալ գույնի
ցուցիչների և նրանց պարբերաշջանի մեջ եղած կապի որոշումը
նոր մեթոդով, ինչպես նաև գույնի ցուցիչների և սպեկտրալ
տիպերի մեջ եղած կապը։

Այնուհետև որոշված են ցեֆեիդների զույնի ավելցուկները, յուլսի ընդհանուր կլանումները, լուսանկարչական բացարձակ աստղային մեծությունները և իրական հեռավորությունները:

Աշխատության վերջում բերված է հավելված, որտեղ հակիրճ կերպով տրված են ստացած արդյունքները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԳԻՏԱՐԱՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СООБЩЕНИЯ БЮРАКАНСКОЙ ОБСЕРВАТОРИИ

ՊՐԱԿ III

ԵՐԿԱՐԱՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՑԵՖԵԻԴՆԵՐԸ ԵՎ ԼՈՒՅՍԻ ԲՆՏՐԱԿԱՆ
ԿԼԱՆՈՒՄԸ ԴՍԼԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Հ. Ս. ԲԱԴԱԼՅԱՆ



ՆԵՐԿԱՐԱՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՅԵՖԵՒԴՆԵՐԻ ԴՈՒՅՆԻ ՅՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1. ԴԻՏՄԱՆ ՄԵԹՈԴԸ


Երկարապարբերական ցեֆերիդների զույնի ցուցիչը և զույնի ավելցուկը որոշելու նպատակով 1946 թվի ընթացքում Հայկական ՍՍՏ Դիտությունների Ակադեմիայի Աստղադիտարանի թևամտիկ պլանի համաձայն, մենք լուսանկարչական դիտումներ ենք կատարել Բյուրականում—Արագածի հարավային լանջին (ծովի մակ. 1500 մետր բարձրության վրա)։ Այդ նպատակով դիտողական նյութեր ստանալու համար մենք օգտագործել ենք Բյուրականում տեղակայված 5 դյույմանոց կրկնակի աստղադրաֆը՝ «Էրնստար» օրեկտիվներով, սրունք ֆոկուսային հեռավորությունները հավասար են 340 միլիմետրի, Աստրոգրաֆի յուրաքանչյուր կամերան 16×16 սմ չափի լուսանկարչական թիթեղով հրկնքից ծածկում է 130՝ քառ. աստիճան մակերես, իսկ էֆեկտիվ դաշտը ծածկում է մոտավորապես 300 քառ. աստիճան։

Լուսանկարելու տիրույթներն ընտրել ենք այնպես, որ ընդգրկվեն այն ցեֆերիդները, սրունք բաշխված են Դալասիայի հասարակածում՝ $-10^\circ < b < +10^\circ$ գալակտիկ լայնության ուղիղներում, իսկ ըստ գալակտիկ երկարության ձգված են 335° մինչև 140° , Մեր դիտած ցեֆերիդների ցուցակն ըստ գալակտիկ կոորդինատների, բերված է առաջին աղյուսակում (տես հավելվածը)¹ և զբաղիստերն ներկայացված է առաջին զծագրում։

Այսպիսով մեր ընտրած տիրույթների ցեֆերիդներն ընդգրկված են Կառավարի (Aurigae), Կասսիոպեյի (Cassiopea), Կեֆեոսի (Cepheus), Կարապի (Cygnus), Արծիվի (Aquila) և Աղեղնավորի (Sagittarius) համաստեղություններում։

Նախ քան լուսանկարման աշխատանքներն սկսելը, վերը

¹ ՆՐԱՆՈՐՈՐՅՈՒՄ.—Տեքստում եղած հետագա բոլոր աղյուսակներն ըստ հերթականության բերված են հավելվածի մեջ։



նշված համաստեղություններում ընտրել ենք կենտրոնական պայծառ աստղեր, որպեսզի հնարավորին չափ մեծ թվով ցեֆերդներ նկարվեն լուսանկարչական թիթեղի կենտրոնից ոչ հեռու, այսինքն՝ էֆեկտիվ դաշտում: Ընտրած տիրույթների համար ամենից ավելի նպատակահարմար ենք դրել հետևյալ վեց կենտրոնական աստղերը՝

1. η Aur	4. α Cyg
2. β Cas	3. θ Ser
3. δ Cep	6. μ Sgr

Նշված յուրաքանչյուր տիրույթը լուսանկարել ենք կրկնակի աստրոգրաֆի երկու կամերայով, միաժամանակ աստրոգրաֆի կամերաներից մեկը հարմարեցրել ենք ղեղին «Auranta» լուսադաշտով (светофильтр), իսկ մյուսն առանց լուսադաշտի նկարելու: Համար 1 լուսադաշտը տեղավորել ենք անմիջապես լուսանկարչական թիթեղի առաջ այնպես, որ լուսադաշտի և լուսանկարչական թիթեղի միջև ազատ տարածություն չի եղել: Լուսադաշտի միջոցով նկարելու համար օգտագործել ենք Ilford Hypersensitive panchromatic տեսակի լուսանկարչական թիթեղ, իսկ առանց լուսադաշտի նկարելու համար՝ ՆԻԿՖԻ (НИКФИ) ոչսենսիբիլիզիրված (несенсибилизированные) լուսանկարչական թիթեղ: Այս եղանակով հաջողվել է η Aur, β Cas և μ Sgr տիրույթների համար լուսանկարել երեքական, իսկ մնացած տիրույթների համար՝ երկուական դուբլ: Ցեֆերդների աստղային մեծությունները որոշելը Հյուսիսային բևեռային հաջորդականությամբ — NPS աստղերի հետ կապակցելու նպատակով ամեն մի լուսանկարչական թիթեղի վրա, բոլոր ղեկվածներում, ցեֆերդները լուսանկարելուց անմիջապես հետո նկարել ենք նաև NPS աստղերը:

Նկարահանումները կատարել ենք 30-ական րոպե լուսակալումով (էքսպոզիցիայով), առանց ընդմիջումների: Դիտումները կատարել ենք ֆոկուսում և միշտ պահպանել ենք միատեսակ հաստատուն ֆոկուս: Աշխատել ենք լիտումները կատարել այն ժամանակ, երբ ավյալ տիրույթի զինթային հեռավորությունը հնարավորին չափ մոտ է եղել բեվեռի զենթային հեռավորությանը, բացառությամբ մի քանի դեպքի: Նկարած լուսանկար-

չակաճ թիրթիղների լարորատոր մշակումները միշտ կատարել ենք միատեսակ պայմաններում:

1946 թվի երկրորդ կեսում հաջողվել է վերը նշված տիրույթների համար ստանալ 15 զույգ հաջող լուսանկարներ: Առանց լուսազտիչի և լուսազտիչով նկարահանումների տվյալները բերված են երկրորդ աղյուսակում: Աղյուսակի առաջին սյունակում բերվում են նեգատիվների համարները: Այն համարները, որոնց մոտ զրված է A, լուսազտիչով են նկարված, իսկ այն համարները, որոնց մոտ զրված է B նկարված են առանց լուսազտիչի:

Երկրորդ սյունակում զրված են լուսանկարված տիրույթների կենտրոնական օբեկտները, երրորդում՝ դիտումների միջին մոմենտները, արտահայտված Հուլյանոսի օրերով, վեցերորդ և յոթերորդ սյունակներում՝ լուսանկարչական և լուսատեսողական ճառագայթների համար դործածված լուսանկարչական թիրթիղների տեսակները, ըստ որում HH նշանակում է ՆիկՖի չսենսիբիլիզացված IHP—Ilford Hypersensitive Panchromatic, HP—ՆիկՖի պանխրոմ և վերջին սյունակում՝ միջին ղեկիթային հեռավորությունը:

2. ԴԻՏՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Մեր ընտրած տիրույթներում նկարված նրկարապարներական ցեֆերդների տեղը մենք որոշել ենք BD աստղային քարտեզի վրա և սպա նույնացրել նեգատիվների վրա: Այնուհետև նեգատիվների վրա նշանակել ենք նաև Հյուսիսային բևեռային հաջորդականություն—NPS այն աստղերը, որոնք հետագայում օգտագործել ենք ցեֆերդների լուսանկարչական և լուսատեսողական աստղային մեծությունները որոշելու համար: Դրա համար նպատակահարմար ենք դրել Հյուսիսային բևեռային տիրույթի աստղերից ընտրել հետևյալ տասը աստղերը. 7, 8, 37, 10, 47, 11, 57, 13, 67 և 14:

Ցեֆերդների և բևեռային հաջորդականության աստղերի պայծառությամբ ղեհաստեղծ կատարել ենք ցուցնակի (шкала) եղանակով: Նեգատիվները մշակելու համար ստացել ենք հատուկ ցուցնակ, օգտագործելով համապատասխան տեսակի լուսանկարչական թիրթիղներ՝ լուսազտիչով և առանց լուսազտիչի նկարելու համար: Ցուցնակները նկարված են այնպիսի ֆոկուսում, ինչպիսի ֆոկուսում նկարված են բոլոր ցեֆերդները և Հյուսիսային բևեռային

վեռային հաջորդականության աստղերը: Ցուցնակը կազմված է 15 աստղապատկերից, որոնցից յուրաքանչյուրը լուսանկարումը կատարված է երկրաչափական պրոդրեսիայի եղանակով, առաջին, լուսակալումն ընդունելով 2 վայրկյան, իսկ հայտարարը՝ $\sqrt{2}$:

Դաշտի օպտիկական սխայից խուսափելու նպատակով մշակել ենք միայն այն ցեֆերիդները, որոնք գտնվել են նեղատիվի օպտիկական կենտրոնի շուրջը 7 սանտիմետր տրամագիծ ունեցող մակերեսի վրա, որտեղ աստղերի նկարներն աղավաղված չեն և պիտանի են ուսումնասիրության համար: Բացի այդ, օգտագործման համար Հյուսիսային բևեռային հաջորդականության աստղերից վերցված են միայն նրանք, որոնք նույնպես գտնվում են նեղատիվի կենտրոնական մասում: Այս հանգամանքը խոշոր նշանակություն ունի ցեֆերիդների աստղային մեծությունները հնարավորին չափ ճիշտ որոշելու տեսակետից: Մեր ստացած նեղատիվների վրա հայտնաբերվել է 65 ցեֆերիդ, սակայն զբաղեցրել են միայն 40 են եղել էֆեկտիվ դաշտում, որոնց վերաբերյալ կատարված է այս հետադոտությունը:

Վերը նշված Հյուսիսային բևեռային հաջորդականության աստղերը բոլոր նեղատիվների վրա պնահատված են ոչ պակաս, քան հինգ անգամ և վերցված են նրանց միջին թվաբանական արժեքները:

Մեր զիառումների հիման վրա գույնի հավասարումը որոշելու, ցուցնակի մեկ աստիճանն աստղային մեծությամբ արտահայտելու և զերո կետի շտկումը որոշելու համար յուրաքանչյուր նեղատիվի համար առանձին կազմված են հետևյալ տեսքի տասը պայմանական հավասարումները, որոնք լուծված են ամենափոքր քառակուսիների մեթոդով

$$ax + by + cz = n, \quad . . . (1)$$

որտեղ $a = 1$, b — հյուսիսային բևեռային հաջորդականության աստղերի պայծառության զնաչատականն է, արտահայտված ցուցնակի աստիճաններով:

C — նույն աստղերի գույնի ցուցիչն է, բերված միջադրային սխեմայի,

n — նրանց աստղային մեծությունն է արտահայտված միջադրային սխեմայով,

x — զերո կետի շտկումն է, y — պայծառության հավասարումը կամ ցուցնակի մեկ աստիճանը, արտահայտված աստղային

մեծությունները և Z —գումարի հավասարումը Այսպիսով, ամենափոքր քառակուսիների մեթոդով որոշված են X , Y և Z անհայտների արժեքները բոլոր նեգատիվների համար առանձին-առանձին ըստ Դաուսի սխեմայի՝

$$\begin{aligned} x + \frac{[ab]}{[aa]} y + \frac{[ac]}{[aa]} z &= \frac{[an]}{[aa]} \\ y + \frac{[bc. 1]}{[bb. 1]} z &= \frac{[bn. 1]}{[bb. 1]} \quad . . . (2) \\ z &= \frac{[cn. 2]}{[cc. 2]} : \end{aligned}$$

Այս անհայտների վերաբերյալ ստացված համապատասխան արժեքները 15 զույգ նեգատիվների չափումների համար, դրեթե իրար հավասար են։ Դա բացատրվում է նախ նրանով, որ մեր դիտումները միանգամայն համասեռ են, և բացի այդ, աստղերի պայծառության դնահատումները կատարված են մեծ ճշտությամբ։ Դիտումների հիման վրա լուծումներից ստացված արժեքները ցույց են տալիս, որ մեր սխտեմը միջազգային սխտեմից, առանց լուսագտելի կատարած դիտումների դեպքում, տարբերվում է $0^m.115$, ($Z_{pv} = 1^m. 115$) և ՆԻԿՖԻ պանխրոմ տեսակի լուսանկարչական թիթեղի դեպքում՝ $0^m.273$ ($Z_{pv} = 1^m.273$)։

Վերը նշված անհայտները որոշելուց հետո կատարել ենք նաև սխալների հաշվում։ Մեկ պայմանական հավասարման սխալը որոշել ենք հետևյալ բանաձևով՝

$$\varepsilon_0 = \mp \sqrt{\frac{\Sigma (0-c)^2}{n_1 - n_2}}, \quad . . . (3)$$

որտեղ $(0-c)$ —հանդիսանում է հյուսիսային քեեռային հաջորդականության աստղերի համար դիտումների համաձայն ստացված աստղային մեծությունների և միջազգային սխտեմի բերված ստանդարտ աստղային մեծությունների տարբերությունը, n_1 —պայմանական հավասարումների թիվը է ($n_1 = 10$), n_2 —անհայտների թիվը է ($n_2 = 3$)։

Այնուհետև որոշել ենք յուրաքանչյուր լուծման համար գումարի հավասարման, ցուցնակի աստիճանների դնահատման և զերո կետի շտկման սխալները։

Այս եղանակով 30 նեգատիվից յուրաքանչյուրի համար առանձին կադմյաժ և լուծված են 10-ական պայմանական հավասարումներ:

Բոլոր լուծումներից ստացված արդյունքների միջին արժեքները հետևյալն են՝ $\bar{x}' = 6^m.109 \pm 0^m.124$, $\bar{y}' = 0^m.373 \pm 0^m.019$, $\bar{z}' = 0^m.094 \pm 0^m.091$ (լուսանկարչական դիտումների համար) և $\bar{x}'' = 6^m.269 \pm 0^m.151$, $\bar{y}'' = 0^m.365 \pm 0^m.020$, $\bar{z}'' = 1^m.194 \pm 0^m.098$ (լուսատեսողական դիտումների համար):

Ստացված արդյունքները յուրաքանչյուր լուծման համար առանձին-առանձին ղետեղված են 3-րդ և 4-րդ աղյուսակներում: 3-րդ աղյուսակում բերված տվյալները վերաբերում են առանց լուսադաշի կատարված դիտումներին (x', y'), իսկ 4-րդ աղյուսակում բերված տվյալները՝ լուսադաշի միջոցով կատարված դիտումներին (x'' և y''): Այդ աղյուսակների առաջին սյունակում գրված են նեգատիվների համարները, երկրորդում՝ x -ի համար ստացված տվյալները, երրորդում՝ y -ի համար ստացված արժեքները, չորրորդում՝ z -ի արժեքները, հինգերորդում՝ պայմանական հավասարումների սխալը, վեցերորդում, յոթերորդում և ութերորդում՝ x , y և z մեծությունների սխալների համար ստացված արժեքները:

3. ԵՐԿԱՐԱՊԱՐՐԵՐԱԿԱՆ ՑԵՖԵԻՆՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱԿԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՏԵՍՈՂԱԿԱՆ ԱՍՏՂԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հյուսիսային բևեռային հաջորդականությամբ վերը նշված տասը աստղերի օգտագործումից ստացված տվյալների համաձայն x , y և z մեծությունները որոշելուց հետո հնարավոր է եղել անցնել ցեֆեիդների լուսանկարչական և լուսատեսողական աստղային մեծությունները որոշելու հարցին: Օգտագործած բոլոր նեգատիվների վրա յուրաքանչյուր ցեֆեիդ ցուցնակի միջոցով դնահատել ենք ոչ պակաս քան հինգ անգամ և վերցրել նրանց զնահատումների թվարանական միջինը: Ինչպես վերևում ասացինք, ուսումնասիրության համար օգտագործված են միայն այն ցեֆեիդները, որոնք գտնվում են նեգատիվի կենտրոնից ոչ հեռու քան երեք ու կես սանտիմետր: Բացի այդ, դուրս են ձգված բոլոր այն ցեֆեիդները, որոնք պայծառ են եղել 6-րդ աստղային մեծությունից կամ թույլ՝ 12-րդ աստղային մեծությունից,

որովհետև հնարավոր չի եղել այդպիսիներին հարկ եղած ճշտությամբ զննահատել: Այսպիսով, հետազոտման համար օգտագործված է միայն 40 ցեֆեիդ, որոնց զննատուժը հնարավոր է եղել կատարել մեծ ճշտությամբ:

Մեր ուսումնասիրության համար ընտրված ցեֆեիդները զննատուժը ցուցնակի միջոցով ավարտվելուց հետո, որոշել ենք նրանց լուսանկարչական և լուսատեսողական աստղային մեծությունները, դրա համար օգտագործելով հետևյալ բանաձևը՝

$$\left. \begin{aligned} m_{rg} &= x' + y' \text{ st}' \\ m_{pv} &= x'' + y'' \text{ st}'' \end{aligned} \right\}, \quad . . . (1)$$

որտեղ՝

m_{rg} — լուսանկարչական աստղային մեծությունն է,

m_{pv} — լուսատեսողական աստղային մեծությունն է,

x' և x'' — զերս կետի շտկումն է,

y' և y'' — ցուցնակի մեկ աստիճանի արժեքն է,

st' և st'' — ցուցնակի տատիճանն է (ցուցմունքը):

Այս հավասարումների միջոցով յուրաքանչյուր նեղատիվի համար որոշված են ցեֆեիդների լուսանկարչական և լուսատեսողական աստղային մեծությունները: Դրանից հետո նույն եղանակով կատարել ենք հաշվումները հետևյալ փոփոխությունների համար, որ դույնի հավասարման արժեքները յուրաքանչյուր լուսանկարչական թիթեղի համար իրարից փոքր չափով են ուարերելում, նպատակահարմար ենք դրել նույն տեսակի լուսատեսողական թիթեղների համար վերցնել ստացած դույնի հավասարման տվյալների միջին արժեքները, այսինքն՝

$$Z_{pg} = 0^m.094, \quad Z_{pv_1} = 1^m.115 \quad \text{և} \quad Z_{pv_2} = 1^m.273$$

Գույնի հավասարման այս միջին արժեքները տեղադրելով (2) հավասարման մեջ որոշել ենք յուրաքանչյուր նեղատիվի համար x -ի և y -ի նոր արժեքները: Լուսանկարչական աստղային մեծությունները որոշելու համար x -ի և y -ի նոր արժեքները նշանակել ենք x'_1 և y'_1 , իսկ լուսատեսողական աստղային մեծությունները որոշելու համար x''_1 և y''_1 : Այսպիսով, x -ը և y -ը որոշելու ճշտությունը մեծանում է: x -ի և y -ի նոր արժեքներն առանց լուսազտիչի և լուսազտիչով կատարած դիտումների համար, բերված են 5-րդ և 6-րդ աղյուսակներում: Օգտագործե-

լով X-ի և Y-ի այս տրեքները, մենք նորից (4) բանաձևով սրտշիկ ենք ցեֆերիդների լուսանկարչական և լուսաանոդական աստղային մեծությունները:

4. ՑԵՆՑԻԴԵՆՏԻ ԱՍՏՂԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԿՈՒՄԸ ԸՄՏ ՋԵՆԻԹԱՅԻՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Ցեֆերիդների աստղային մեծությունները որոշելիս տարբեր զենիթային հեռավորությունների ղեպքում երկրի մթնոլորտում լույսի կլանման փոփոխության հետևանքով առաջացող սխալներից խուսափելու համար, մենք ձգտել ենք, ըստ հնարավորության, տիրույթները լուսանկարել այն ժամանակ, երբ նրանց միջին զենիթային հեռավորությունը գրեթե հավասար է հզել բևեռային տիրույթի զենիթային հեռավորությանը: Սակայն միշտ էլ, որ հաջողվել է աղպես վարվել, իսկ որոշ տիրույթներին համար էլ անհնարին է հզել: Այդ պատճառով էլ ցեֆերիդների աստղային մեծությունները որոշելու համար անհրաժեշտ ենք համարել մոյնել համապատասխան ուղղում՝ կապված ցեֆերիդների լուսանկարելու ժամանակ նրանց և բևեռային տիրույթի միջև հղած զենիթային հեռավորությունների տարբերության հետ: Ջենիթային հեռավորությունից կախված ուղղումը սրտշիկում նպատակով հաշվել ենք յուրաքանչյուր ցեֆերիդի լուսանկարելու միջին մոմենտներին համապատասխան զենիթային հեռավորությունները և դրա հիման վրա որոշել յուրաքանչյուր դիտման համապատասխան շտկումները, արտահայտված աստղային մեծությամբ:

Քանի որ մթնոլորտի թափանցիկության գործակիցը Բյուրականի համար մինչև այժմ երբեք որոշված չի հզել, ապա անհրաժեշտ է հզել այս աշխատանքին զուգահեռ, 1946 թվի ամռանը կատարել նաև դիտումներ մթնոլորտի թափանցիկության գործակիցը որոշելու համար: Այդ նպատակով իրարից անկախ դիտումներ են կատարել Վ. Ս. Սաֆրոնովը և Ն. Լ. Խվաճուճյանը, Լուսանկարումները կատարել են նույն աստղադրաֆով, նույն լուսագրիչով և նույն տեսակի լուսանկարչական թիթեղներով:

Վ. Ս. Սաֆրոնովը դիտումները կատարել է հաեյալ մեթոդով. — աստղադրաֆի մի կամերայով նա լուսանկարել է յուսադրիչով, իսկ մյուսով՝ առանց լուսագրիչի, նկարել է երկնա-կամարի որոշ տիրույթ զենիթում և հետո անմիջապես՝ նյութա-սային բևեռային հաջորդականության շարքի աստղերը՝ նույն

լուսանկարչական թիթեղի վրա: Այնուհետև այդ տիրույթի աստղերը 4—5 ժամից հետո, հորիզոնին մոտեցած ժամանակ, նորից նույն ձևով լուսանկարել է, միայն նոր լուսանկարչական թիթեղներով: Վ. Ս. Սաֆրոնովի արդյունքը հետևյալն է. թափանցիկությամբ դործակիցը լուսանկարչական ճառագայթների համար՝ $p_{\text{pr}} = 0^{\text{m}}.85$, իսկ լուսատեսողական ճառագայթների համար՝ $p_{\text{pr}} = 0^{\text{m}}.91$: Մթնոլորտի թափանցիկության այս գործակիցները հանդիսանում են երեք զիտումներից (լուսանկարած տարրեր զիջերեն) ստացված արդյունքների միջին թվաբանականը:

Ն. Լ. Իվանովային հաջողվել է մթնոլորտի թափանցիկության գործակիցն ստանալ միայն լուսանկարչական ճառագայթների համար: Նա կատարել է արտաֆոտոլուսային լուսանկարչական զիտումներ, նեգատիվները մշակել է Հարտմանի միկրոֆոտոմետրի վրա և ստացել է $p_{\text{pr}} = 0^{\text{m}}.83$:

Մենք նպատակահարմար ենք գտել մթնոլորտի թափանցիկության գործակիցի համար վերցնել երկու իրարից անկախ զիտումներից ստացված արդյունքների միջին արժեքը, որը կարելի է հավանական համարել (լուսանկարչական ճառագայթների համար), այսինքն՝ $p_{\text{pr}} = 0^{\text{m}}.84$, իսկ լուսատեսողական ճառագայթների համար Սաֆրոնովի ստացած գործակիցը $p_{\text{pr}} = 0^{\text{m}}.91$:

Մթնոլորտի թափանցիկության այս գործակիցների և ցեֆերիդների զննիթային հեռավորությունների հիման վրա հաշվել ենք զննիթային հեռավորություններից կախված ուղղումները:

5. ՑԵՖԵՐԻԴՆԵՐԻ ԱՍՏՂԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՏԵՍԱԿ ՁԱՋԻ (ՓՈԻԼԻ) ԲԵՐԵԼԸ

Նկատի ունենալով, որ մեր ունեցած լուսանկարչական թիթեղները այն շրջանում սակավաթիվ են եղել և անհրաժեշտ էր ամեն մի լուսանկարչական թիթեղի վրա ստանալ նյութ մի քանի ցեֆերիդների համար, ստիպված ենք եղել ցեֆերիդների զիտումները կատարել տարբեր ֆազերում: Յուրաքանչյուր ցեֆերիդի համար, մեր զիտումներից տարբեր ֆազերում ստացված լուսանկարչական և լուսատեսողական աստղային մեծությունները, նրանց պայծառության փոփոխման միջին ֆազին բերելու համար վարվել ենք հետևյալ կերպ:

Սկզբում կատարել ենք մեր լուսանկարած 40 ցեֆերիդների էլեմենտների շտիում, դրա համար օգտագործելով Մոսկվայի Շտեյնրեբրգի անվան Առողջազրտական ինստիտուտի ստուգված

ձեռագիր կատալոգը, ցեֆերիդների էլեմենտների վերաբերյալ վերջնական շտկումը կատարելուց հետո որոշել ենք դիտումների ֆազերը:

Այնուհետև միջին աստղային մեծությունն ունեցնելու համար, օգտագործել ենք ցեֆերիդների պայծառությամբ փոփոխման նորմալ կորերը, ընտրելով նրանցից լավագույնները, այսինքն՝ այն կորերը, որոնք ստացված են ավելի մեծ թվով դիտումների հիման վրա: Ընթերցողներ լուսանկարչական և լուսատեսողական պայծառութեան փոփոխման նորմալ կորերը ձեռք բերելուց հետո այդ կորերը բերել ենք միասնակ մասշտաբի և զրաֆիկ եղանակով որոշել նրանց միջին աստղային մեծությունները: Այդ կորերի օդնությունամբ, մեր դիտած ֆազերի համապատասխան, որոշել ենք ցեֆերիդների դիտումներից ստացված աստղային մեծությունները, միջին աստղային մեծության բերելու ուղղումը՝ թե լուսանկարչական և թե լուսատեսողական դիտումների համար առանձին-առանձին: Մեր դիտումների միջոցով սրտած ցեֆերիդների միջին լուսանկարչական ու լուսատեսողական աստղային մեծությունները և դիտած դույնի ցուցիչները վերջնականապես ուղղված կերպով բերված են 7-րդ աղյուսակում, սրտեղ առաջին սյունակում գետնդված են ցեֆերիդները, նրկրորդում՝ միջին լուսանկարչական աստղային մեծությունները և երրորդում՝ դիտած դույնի ցուցիչները:

Այնուհետև հաշվել ենք դույնի ցուցիչները սրտելու ճշտութեանը: Դույնի ցուցիչների միջին քառակուսիական սխալը բոլոր երեք դիտումներից ստացվել է հավասար՝ $\sigma = \pm 0^m.10$, Դանշանակում է, որ ցեֆերիդների դույնի ցուցիչները մեր դիտումների սխտեմով սրտված է $\pm 0^m.10$ աստղային մեծության ճշտությամբ:



ԵՐԿԱՐԱՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՑԵՖԵԻԴՆԵՐԻ ԳՈՒՅՆԻ ԱՎԵԼՑՈՒԿԸ

1. ԵՐԿԱՐԱՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՑԵՖԵԻԴՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԳՈՒՑՆԻ ՑՈՒՑԻԶԻ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՍՏ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ

Քանի որ այս հետազոտության գլխավոր նպատակը եղել է որոշել ցեֆեիդների գույնի ավելցուկը՝ այսինքն դիտած և նորմալ գույնի ցուցիչների տարբերությունը, ապա բնականաբար հիմնական խնդիր է հանդիսացել որոշել նաև տվյալ ցեֆեիդների նորմալ գույնի ցուցիչները, որն առանձին ցեֆեիդների համար մինչև հիմա որոշված չի եղել:

Խնչպես հայտնի է, նորմալ գույնի ցուցիչը կարելի է որոշել զրաֆիկորեն «պարբերաշրջան—սպեկտրալ տիպ» և «սպեկտրալ տիպ—գույնի ցուցիչ» կապակցությունների հիման վրա: Սակայն գույնի ցուցիչի իսկական արժեքի կախումը սպեկտրալ տիպից այնպիսի դերհսկանների համար, ինչպիսին են ցեֆեիդները, կարող է տարբերվել սովորական կախումից, որն առհասարակ դերհսկանների համար լավ որոշված չէ: Բացի դա, կրկնակի ինտերպոլացիա կատարելու շնորհիվ զգալի սխալներ կառաջանան և նորմալ գույնի ցուցիչները այս եղանակով հնարավոր չի լինի որոշել անհրաժեշտ ճշտությամբ: Ուստի այդ եղանակից խուսափելով, մեզ հաջողվել է նորմալ գույնի ցուցիչի կախումը պարբերաշրջանի լոգարիթմից որոշելու համար կիրառել մի նոր մատչելի եղանակի՝ Վերջինս հիմնվում է այն ենթադրության վրա, որ նորմալ գույնի ցուցիչը գծային առնչությամբ է կապված պարբերաշրջանի լոգարիթմի հետ, այսինքն՝

$$CI_0 = a + b \log P$$

հետևաբար յուրաքանչյուր ցեֆեիդը տալիս է մեզ այսպիսի մի սլայմանական հավասարում՝

$$CI = a + b \log P + c p_0, \quad . . . (5)$$

որտեղ՝ α — հանդիսանում է գույնի ցուցիչ, երբ պարբերաշրջան $P=1$ և կլանում գոյություն չունի,

b — մի պարամետր է, որը ցույց է տալիս դույնի ցուցիչի կախումը պարբերաշրջանի լողարիթմից:

P — ցեֆեիդների պայծառության փոփոխման պարբերաշրջանն է,

c — նույնպես պարամետր է, որը հավասար է ընտրական կլանման միջին գործակցի արժեքին.

Այստեղ ρ_0 որոշված է $\rho_0 = \rho \frac{a_0}{a_0}$ արտահայտությամբ, որտեղ՝ a_0 — լույսի կլանման գործակիցն է տվյալ տիրույթի ուղղությամբ ըստ Պարենագոյի¹⁴, $\bar{a}_0$ — նույն գործակցի միջին արժեքն է ըստ տիրույթների համար, որը Պարենագոն ընդունել է հավասար 3.50 իսկ ρ — «հեռավորությունն» է, որը որոշվում է հետևյալ բանաձևից

$$\rho = r \frac{1 - e}{\frac{z}{\beta}} \quad . . . (6)$$

որտեղ՝ $z = r \sin b$, β — ընդունված է հավասար 100 պարսեկի (ըստ Պարենագոյի) b — Գալակտիկ լայնությունն է, իսկ r — հեռավորությունն է:

Որպես սկզբնական մոտեցում բոլոր ցեֆեիդների համար r — հեռավորությունը որոշված է համաձայն Պարենագոյի կլանման բանաձևի, ընդունելով նրա կողմից տրված a_0 մեծության արժեքն, այսինքն կլանման գործակցի արժեքը:

Այսպիսով, յուրաքանչյուր ցեֆեիդի համար հաշվելով ρ_0 -ն և տեղադրելով (5) բանաձևի մեջ մենք ստացել ենք ամեն մի ցեֆեիդի համար մեկ պայմանական հավասարում:

Սակայն, նպատակահարմար ենք գտել լուծումները համար օգտագործել միայն այն ցեֆեիդները, որոնք ավելի մոտ են, այսինքն համեմատաբար քիչ են ծանրաբեռնված ընտրական կլանումով: Տվյալ դեպքում երեք հաստատուններ որոշելու համար միանգամայն բավարար է լուծումը կատարել ըստ քսան պայմանական հավասարումների, որովհետև հեռավոր ցեֆեիդների օգտագործումը կարող է ծանրացնել նորմալ դույնի ցուցիչի որոշման սխալը:

Ըստ քսան պայմանական հավասարումների, առաջին մոտավորությամբ լուծումից a , b և c գործակիցների համար ստացել ենք հետևյալ արժեքները՝ $a=0^m.169$, $b=0^m.494$, $c=\pm 0^m.582$.

Վերևում մենք արդեն ասացինք, որ (5) բանաձևի մեջ առաջին երկու անդամների գումարը հավասար է նորմալ դույնի ցուցիչին, այսինքն՝

$$Cl_c = a + b \log P \quad . . . (7)$$

իսկ վերջին անդամը կարելի է առել, ներկայացնում է լույսի ընտրական կլանումը Այսինքն, եթե ընտրական կլանումը համեմատական է ընդհանուր կլանման, սպա պետք է լինի $CE = \rho_0 c$.

Այնուհետև անհրաժեշտ ենք համարել նշած եղանակով կրկնել նույն ցեֆեիդների համար կազմված քսան պայմանական հավասարումների լուծումը նաև ըստ մեր առաջին մոտավորությամբ ստացած տվյալների, որպես երկրորդ և երրորդ մոտավորությամբ լուծումներ։ Մեր ստացած տվյալների համաձայն $\bar{a}_0 = 1^m.73$, որը հաշվել ենք հետևյալ բանաձևով՝

$$\bar{a}_0 = \Sigma \frac{Ap}{p^3} \quad . . . (8)$$

Հաշվումներից պարզվել է, որ երկրորդ և երրորդ մոտավորությամբ լուծումներից ստացած a և b արժեքների միջև զրեթե սչ մի տարբերություն չկա։ Դրա համար էլ ստորև բերում ենք միայն, վերը նշված (5) բանաձևի տեսքի քսան պայմանական հավասարումներից ամենափոքր քառակուսիների մեթոդով երկրորդ և երրորդ մոտավորությամբ լուծումներից ստացած արդյունքներից մեկը՝

$$a_1 = 0^m.161 \pm 0^m.036, \quad b_1 = 0^m.507 \pm 0.005, \quad c_1 = 0^m.344 \pm 0^m.013$$


Ինչպես տեսնում ենք, առաջին մոտավորությամբ լուծումից ստացած a ու b գործակիցների և երկրորդ ու երրորդ մոտավորությամբ որոշածների միջև զրեթե տարբերություն չկա, իսկ c գործակիցն զգալի կերպով տարբերվում է։

Առաջին մոտավորությամբ լուծելու համար ընդունել ենք $\bar{a}_0 = 3^m.50$ (ըստ Պարենազոյի), իսկ երկրորդ և երրորդ լուծումների համար ըստ պարբերաշրջանի լողարիթմի ստացել ենք $\bar{a}_0 = 1^m.73$ ։

Այսպիսով, ըստ պարբերաշրջանի երեք մոտավորությամբ լուծումներից ստացած a և b արժեքները տեղադրելով (7) բանաձևի մեջ հաշվել ենք մեր դիտած յուրաքանչյուր ցեֆեիդի նորմալ գուլանի ցուցիչները, որոնք երեք մոտավորության գնալքումն էլ իրար հավասար են ստացվել:

Ստացած արդյունքները բերված են 8-րդ աղյուսակում:

Պարբերաշրջանի և նորմալ գուլանի ցուցիչի միջև եղած կապակցությունը ներկայացված է գրաֆիկորեն (նկ. 2), որտեղ, արսցիսների առանցքում տեղադրված է պարբերաշրջանի լողարիթմը, իսկ օրդինատների առանցքում՝ նորմալ գուլանի ցուցիչը:



Նկ. 2

2. ՆՈՐՄԱԼ ԴՈՒՑՆԻ ՑՈՒՑԻՉԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԸՍՏ ՍՊԵԿՏՐԱԼ ՏԻՊԻ

Քանի որ ցեֆեիդների սպեկտրալ տիպերի և գուլանի ցուցիչի միջև գոյություն ունի որոշակի կապակցություն, ապա, բնականաբար, մենք փորձել ենք որոշել նորմալ գուլանի ցուցիչի կախումը սպեկտրալ տիպից նույն եղանակով, ինչպես նախորդ պարագրաֆում որոշեցինք գուլանի ցուցիչի կախումը պարբերաշրջանից այն տարբերությամբ, որ պայծառության փոփոխման պարբերաշրջանի լողարիթմի փոխարեն օդտազործել ենք ցեֆեիդների միջին սպեկտրալ ախպերը: Դրա համար նախ հաշվել ենք ցեֆեիդների միջին սպեկտրալ տիպերը (բերված

Ստրուվերի սխտեմի), որովհետև, ինչպես ասացինք, մեր դիտումներից ստացված դույնի ցուցիչները համապատասխանում են ցեֆեիդների միջին աստղային մեծություններին: Ցեֆեիդների միջին սպեկտրալ տիպերը թվային արժեքներով արտահայտելու համար վերցրել ենք սպեկտրալ տիպերի Fo—K0 միջակայքը և բաժանել 20 մասի: Այսպիսով, յուրաքանչյուր ցեֆեիդի սպեկտրալ տիպին համապատասխան ստացվել է որոշ թվային արժեք: Օրինակ՝ G 1.5 սպեկտրալ տիպին համապատասխանում է Sp=1.15 թվային արժեքը: Թվով 12 ցեֆեիդներ, որոնց սպեկտրալ տիպերը դեռևս հայտնի չեն, դուրս ենք ձգել իսկ մնացած 28 ցեֆեիդներից ընտրել ենք այն ցեֆեիդները, որոնք ըստ հեռավորության մոդուլի ավելի մոտ են և սպեկտրալ տիպի ճշտության տեսակետից ավելի վստահելի են ու կազմել հետևյալ տեսքի 10 պայմանական հավասարումներ՝

$$CI = a' + b' Sp + c' \rho_0' \quad . . . (9)$$

Այս տիպի 10 պայմանական հավասարումներից a' , b' և c' անհայտները որոշված են ամենափոքր քառակուսիների մեթոդով, առաջին, երկրորդ և երրորդ մոտավորությամբ: Առաջին մոտավորությամբ լուծելու դեպքում ընդունել ենք $\bar{a}_0 = 3^m.5$, իսկ երկրորդ և երրորդ մոտավորությամբ լուծումների համար օգտագործել ենք առաջին մոտավորությունից, ըստ պարբերաշրջանի լոգարիթմի լուծումից, ստացված կլանման միջին դործակցի արժեքը, այսինքն $\bar{a}_0 = 1^m.73$:


Քանի որ a' և b' գործակիցների համար առաջին, երկրորդ և երրորդ մոտավորությամբ լուծումներից ստացած համապատասխան արժեքներն իրարից շատ աննշան չափով են տարբերվում, որը չի գերազանցում 0.003-ից, բերում ենք միայն երրորդ մոտավորությունից ստացած արժեքները՝

$$a' = 0^m.409 \pm 0^m.007 \quad b' = 0^m.219 \pm 0^m.008 \quad c' = 0^m.349 \pm 0^m.002$$

